ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀԿԳՄՆՀՄԱԱՊՁԲ-20/5»

ք. Երևան «08» 12 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ջի-Էն-Ջի ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նարինե Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **19375200** (տասնինը միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով

Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **3 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Ջի-Էն-Ջի ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ք. Երևան, Սարյան 36շ, բն 12
Կառավարական տուն 2,	Հեռ.՝ +374 444-444-36
ՀՀ ֆինանսների նախարարության	էլ.փոստ՝ info.gng.armenia@gmail.com
գործառնական վարչություն	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011035624	Հ/Հ 1570068263150200
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02831555
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	**Տնօրեն՝**
---------- **Վ. Գասպարյան**	---------- **Ն. Գրիգորյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«08» 12 2020 թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆՀՄԱՊՁԲ-20/5» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									
Հրա վերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	անվանումը	Ֆիրմային անվանում	չափման միավորը	ընդհանուր քանակը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	մատակարարման	
								Հասցեն**	Ժամկետը
1	33621641/5	**Հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ**	**Ախտահանիչ միջոց «ՊԵՐՕՔՍԻԴԵԶ»**	հատ	**6480**	**2990**	**19375200**	Համաձայն կից ներկայացվող բաշխման ցանկի	Նախատեսվում է գնել 2020 թ՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը ներառյալ, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

Տեխնիկական բնութագիրը

«Պերօքսիդեզ» ախտահանիչ միջոցը իրենից ներկայացնում է համասեռ, թափանցիկ կամ թույլ օպալեսցենտող, անգույնից մինչև բաց-դեղին գույնի, թույլ յուրահատուկ հոտով, խտացված հեղուկ: Միջոցի պարունակության մեջ որպես ազդող նյութեր, մտնում են. ջրածնի պերօքսիդ՝ 18,0%, չորրորդային ամոնիումային միացությունների (ՉԱՄ) խառնուրդ (ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ և դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ)՝ 12,0% (գումարային), թթուների համալիր (կաթնաթթու, օրտոֆոսֆորաթթու, լիմոնաթթու)՝ 1,5% (գումարային), ինչպես նաև օգնող բաղադրիչներ՝ ոչ իոնոգեն մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ), կայունացուցիչ, կոռոզիայի ինհիբիտոր, ապաիոնիզացված ջուր: Միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի սերտ փակ փաթեթավորմամբ, պահման պայմանների պահպանման դեպքում 3 տարի է: Միջոցի աշխատանքային լուծույթների պիտանելիության ժամկետը փակ չժանգոտվող (քրոմնիկելե), ապակյա կամ արծնապատ (էմալապատ՝ առանց էմալի վնասման) տարաներում, մութ տեղում, սենյակային ջերմաստիճանի պայմաններում պահելու դեպքում՝ 21 օրից ոչ ավելի: 1 լիտր խտանյութից ստացվում է 0,25 %-անոց 400 լիտր աշխատանքային պատրաստի լուծույթ: Միջոցն օժտված է հակամանրէային ազդեցությամբ, այդ թվում մանրէասպան հատկությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ աղիքային վարակների հարուցիչների՝ Escherichia coli, Salmonella typhimurium և այլն, տուբերկուլոզի՝ թեստավորված Mycobacterium terrae-ի վրա, ներհիվանդանոցային վարակների (ՆՀՎ)՝ թեստավորված Pseudomonas aeruginosa-ի վրա, անաէրոբ և հատուկ վտանգավոր վարակների (ՀՎՎ), ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և այլն, սիբիրյան խոցի և լեգիոնելոզի հարուցիչների) նկատմամբ, վիրուսասպան ազդեցությամբ մարդու բոլոր հայտնի ախտածին վիրուսների նկատմամբ (այդ թվում ընդերային և արտաընդերային հեպատիտներ Ա-ի, Բ-ի և Ց-ի, ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի հարուցիչների, ադենովիրուսների, Կոքսակի էնտերովիրուսների, ECHO, ռոտավիրուսների, նորովիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» վիրուսների (SARS), հերպեսի, գրիպի, այդ թվում «թռչնի» (A/H5N1), «խոզի» (A/H1N1), պարագրիպի, կարմրուկի վիրուսի, ՍՇՎՎ,

ցիտոմեգալովիրուսների և այլն), սնկասպան ազդեցությամբ (այդ թվում Կանդիդա և Տրիխոֆիտոն (դերմատոֆիտիաների) ախտածին սնկերի, բորբոսասնկերի՝ թեստավորված Aspergillus niger-ի վրա), սպորասպան ազդեցությամբ, ինչպես նաև օվոցիդ հատկություններով՝ մակաբուծային հիվանդությունների (ինվազիաների) հարուցիչների նկատմամբ, այդ թվում նախակենդանիների ցիստերի և օոցիստերի, հելմինթների ձվերի և թրթուրների նկատմամբ: Միջոցի լուծույթները օժտված են լավ լվացող և դեզոդորացնող հատկություններով, չեն ամրացնում օրգանական աղտոտվածությունները մշակվող գերծիքների վրա: Միջոցի լուծույթներն օժտված են երկարատև (մնացորդային) արդյունքով՝ 1 ժամվա ընթացքում մշակված մակերեսից միջոցը չհեռացնելու ժամանակ: Միջոցի լուծույթները աշխատանքային խտություններով չեն առաջացնում կոռոզիակայուն նյութերից, ինչպես նաև պոլիմերային նյութերից, ռետինից բժշկական սարքերի, անհաս երեխաների կուվեզների, մահճակալների, կահույքի, պատերի, հատակի, սանիտարատեխնիկական սարարքավորումների, հախճասալիկների, լաքաներկային ծածկույթով փայտյա մակերեսների, լինոլեումի, ապակու, կերամիկայի և խեցե առարկաների մշակվող մակերեսների վնասվածքներ: Միջոցը պահպանում է իր հատկությունները սառչելուց և հետագա հալչելուց հետո: Առկա է ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ՝ հաստատված Առողջապահության նախարարի «31» հուլիսի 2019թ. No 2099 – Լ հրամանով: Մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի 2/3-ի առկայություն: Վտանգավորության աստիճանը՝ 3 - 4-րդ դաս: Փաթեթավորումը 0.5-1 լիտր ծավալով պոլիէթիլենային տարա՝ համապատասխան չափիչ բաժակով:

** Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
***Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքների մատակարարումը՝ տեղափոխումը, բեռնաթափումը, իրականացնում է Վաճառողի կողմից իր միջոցների հաշվին, ըստ ուսումնական հաստատությունների /կից ներկայացվող բաշխման ցանկին համապատասխան/:*

ԳՆՈՐԴ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011035624
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

_____ / **Վ. Գասպարյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Ջի-Էն-Ջի ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Սարյան 36շ, բն 12
Հեռ.՝ +374 444-444-36
Էլ.փոստ՝ info.gng.armenia@gmail.com
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570068263150200
ՀՎՀՀ 02831555

Տնօրեն՝

_____ **Ն. Գրիգորյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

** ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

հ/հ	Մարզ	Անվանումը	Հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցի քանակը՝ հատ
1	Արագածոտն	ք. Աշտարակի Ն.Սիսակյանի անվ. թիվ 5 ա/դ	24
2	Արագածոտն	ք. Ապարանի ֆիզմաթ ա/դ	24
3	Արագածոտն	ք. Թալինի ա/դ	24
4	Արագածոտն	«Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
5	Արագածոտն	'Աշտարակի արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
6	Արագածոտն	'Արագածի արհեստագործական պետական ուսումնարան' ՊՈԱԿ	24
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1-Արագածոտնի մարզ			**144**
1	Արարատ	գ. Ոսկետափի թիվ 2 ա/դ	24
2	Արարատ	ք. Արարատի ա/դ	24
3	Արարատ	ք. Արտաշատի ա/դ	24
4	Արարատ	ք. Մասիսի հ. 5 ա/դ	24
5	Արարատ	ք. Վեդիի Մ.Խաչատրյանի անվ. թիվ 3 ա/դ	24
6	Արարատ	«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
7	Արարատ	«Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
8	Արարատ	Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ	24
9	Արարատ	«Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ	24
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2-Արարատի մարզ			**216**
1	Արմավիր	ք. Արմավիրի թիվ 4 ա/դ	24
2	Արմավիր	ք. Արմավիրի Ռ.Եղոյանի անվ. թիվ 1 ա/դ	24
3	Արմավիր	ք. Մեծամորի Ս. Գալստյանի անվան թիվ 2 ա/դ	24
4	Արմավիր	ք. Վաղարշապատի Գ.Նարեկացու անվ. թիվ 2 ա/դ	24
5	Արմավիր	ք. Վաղարշապատի Մ.Գորկու անվ. թիվ 5 ա/դ	24
6	Արմավիր	ք. Վաղարշապատի Մ.Խորենացու անվ. թիվ 10 ա/դ	24
7	Արմավիր	ք. Արմավիրի «Տիգրան Մեծի» անվ. ռազմամարզական վարժ.	24
8	Արմավիր	«Արմավիրի մենապայքարային մարզաձևերի ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
9	Արմավիր	«Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
10	Արմավիր	«Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ	24
11	Արմավիր	«Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
12	Արմավիր	«Արմավիրի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
13	Արմավիր	«Արմավիրի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ	24
14	Արմավիր	'Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան' ՊՈԱԿ	24
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 3-Արմավիրի մարզ			**336**

1	Գեղարքունիք	գ. Ծաղկունքի «Ծաղկունք բաց դպրոց» հիմնադրամ	24
2	Գեղարքունիք	գ. Ձորագյուղի ա/դ	24
3	Գեղարքունիք	գ. Վարդենիկի կթհ ա/դ	24
4	Գեղարքունիք	ք. Գավառի ա/դ	24
5	Գեղարքունիք	ք. Ճամբարակի ա/դ	24
6	Գեղարքունիք	ք. Մարտունու ա/դ	24
7	Գեղարքունիք	ք. Սևանի Խ. Աբովյանի անվ. ա/դ	24
8	Գեղարքունիք	ք. Վարդենիսի Հ.Համբարձումյանի անվ. ա/դ	24
9	Գեղարքունիք	«Սևանի ջրային մարզաձևերի ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
10	Գեղարքունիք	«Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
11	Գեղարքունիք	«Սևանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
12	Գեղարքունիք	«Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ» ՊՈԱԿ բ/լ	24
13	Գեղարքունիք	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	24
14	Գեղարքունիք	«Գավառի պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ	24
15	Գեղարքունիք	«Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ	24
16	Գեղարքունիք	«Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ	24
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 4-Գեղարքունիքի մարզ			**384**
1	Երևան	Ա. Իսահակյանի անվան 16 ավագ	24
2	Երևան	Հայ - չինական բարեկամության դպրոց	24
3	Երևան	ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ, Ավագ դպրոց	25
4	Երևան	ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ, Արևելյան դպրոց-պարտեզ	24
5	Երևան	ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ, Արևմտյան դպրոց-պարտեզ	24
6	Երևան	ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ, Հարավային դպրոց-պարտեզ	24
7	Երևան	ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ, Հյուսիսային դպրոց-պարտեզ	24
8	Երևան	ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ, Միջին դպրոց	25
9	Երևան	ք. Երևանի «Հերացի» ա/դ	25
10	Երևան	ք. Երևանի «Օլիմպոս» Կրթահամալիր - ավագ դպրոց	24
11	Երևան	ք. Երևանի Ա.Երզնկյանի անվ. թիվ 118 ա/դ	24
12	Երևան	ք. Երևանի Ա.Ղարիբյանի անվ. թիվ 142 ա/դ	24
13	Երևան	ք. Երևանի Ա.Մարգարյանի անվ. թիվ 29 ա/դ	25
14	Երևան	ք. Երևանի Բ.Ժամկոչյանի անվ. թիվ 119 ա/դ	25
15	Երևան	ք. Երևանի Գ. Գյուլբեկյանի անվ. թիվ 190 ա/դ	25
16	Երևան	ք. Երևանի Գ.Էմինի անվան N 182 ա/դ	24
17	Երևան	ք. Երևանի Գ.Մարգարյանի անվ. թիվ 94 ա/դ	24
18	Երևան	ք. Երևանի Գ. Զոհրապի անվան թիվ 97 ա/դ	24
19	Երևան	ք. Երևանի ԵՃՇՊՀ Մանուկ Աբեղյանի անվ. ա/դ	24
20	Երևան	ք. Երևանի թիվ 105 ա/դ	24
21	Երևան	ք. Երևանի թիվ 109 ա/դ	24

22	Երևան	ք. Երևանի թիվ 159 ա/դ	24
23	Երևան	ք. Երևանի թիվ 170 ա/դ	24
24	Երևան	ք. Երևանի թիվ 195 ա/դ	24
25	Երևան	ք. Երևանի թիվ 198 ա/դ	24
26	Երևան	ք. Երևանի թիվ 2 ա/դ	24
27	Երևան	ք. Երևանի թիվ 46 ա/դ	24
28	Երևան	ք. Երևանի թիվ 62 ա/դ	24
29	Երևան	ք. Երևանի Լ.Արիսյանի անվ. թիվ 127 ա/դ	24
30	Երևան	ք. Երևանի Լեոյի անվ. թիվ 65 ա/դ	25
31	Երևան	ք. Երևանի Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ հենակետային թիվ 57 հմ/դ	24
32	Երևան	ք. Երևանի Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ հենակետային վարժարան ա/դ	24
33	Երևան	ք. Երևանի Խ.Դաշտենցի անվ. թիվ 114 ա/դ	24
34	Երևան	ք. Երևանի Կ. Դեմիճյանի անվ. թիվ 139 ա/դ	24
35	Երևան	ք. Երևանի Հ.Գալստյանի անվ. թիվ 83 ա/դ	24
36	Երևան	ք. Երևանի ՀԱԱՀ վարժարան (Ագրարային համալսարան)	24
37	Երևան	ք. Երևանի ՀԱՊՀ ա/դ	25
38	Երևան	ք. Երևանի Մ.Գալշոյանի անվան թիվ 148 ա/դ	24
39	Երևան	ք. Երևանի Մ.Քաջունու անվ. թիվ 54 ա/դ	24
40	Երևան	ք. Երևանի Շ.Սիմոնյանի անվ. թիվ 112 ա/դ	24
41	Երևան	ք. Երևանի Ս.Գևորգյանի անվ. թիվ 189 ա/դ	24
42	Երևան	ք. Երևանի Ս.Խանզադյանի անվ. թիվ 184 ա/դ	24
43	Երևան	ք. Երևանի Ս.Հովսեփյանի անվ. թիվ 115 ա/դ	24
44	Երևան	ք. Երևանի Վ.Թեքեյանի անվ. թիվ 92 հմ/դ	24
45	Երևան	ք. Երևանի Տ. Շևչենկոյի անվ. թիվ 42 ա/դ	24
46	Երևան	Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց	24
47	Երևան	ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց	25
48	Երևան	ք. Երևանի թիվ 13 երաժշտական մգ.մ/դ	24
49	Երևան	ք. Երևանի թիվ 14 հտ.մ/դ	24
50	Երևան	ք. Երևանի թիվ 17 հտ.հմ/դ	24
51	Երևան	ք. Երևանի թիվ 2 հտ/կթհ.	24
52	Երևան	ք. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երե. հատուկ կրթահամալիր	24
53	Երևան	ք. Երևանի Հանրապետական թիվ 1 հտ/կթհ.	24
54	Երևան	ք. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 11 հատուկ /օժանդակ/ դպրոց	24
55	Երևան	ք. Երևանի Պ.Չայկովսկու անվ. մասնագիտացված մ/դ	24
56	Երևան	ք. Երևանի պարարվեստի պետ. քոլեջ	24
57	Երևան	ք. Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական մգ.մ/դ	24
58	Երևան	«Աթլետիկայի օլիմպիական ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
59	Երևան	«Հ.Գասպարյանի անվան շախմատի և շաշկու օլիմպիական ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24

60	Երևան	«Երևանի ծանրամարտի ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
61	Երևան	«Երևանի հրաձգության ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
62	Երևան	«Վ. Ենգիբարյանի անվ. բռնցքամարտի օլիմպիական ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
63	Երևան	«Ն. Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
64	Երևան	«Թիավարության մարզաձևերի օլիմպիական ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
65	Երևան	«Սամբոյի և ձյուդոյի օլիմպիական ՄՊՄԴ» ՊՈԱԿ	25
66	Երևան	«Հեծանվային սպորտի օլիմպիական ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
67	Երևան	«Հ. Շահինյանի անվ. սպորտ., գեղարվ. մարմն. և ակրոբ. օլիմպ. ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
68	Երևան	«Ռ. Կարապետյանի անվ. մենապ. մարզաձևերի օլիմպ. ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
69	Երևան	«Երևանի օլիմպիական ՄՊ համալիր ՄԴ» ՊՈԱԿ	24
70	Երևան	«Տիգրան Պետրոսյանի անվան Շախմատի տուն» ՊՈԱԿ	24
71	Երևան	«Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ	25
72	Երևան	«Տեխնիկական ստեղծագործության հանրապետական» ՊՈԱԿ	24
73	Երևան	«Տեխնիկական մոդելավորման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ	24
74	Երևան	«Աշխատանքային ռեզերվներ» ՄՀԿ	24
75	Երևան	«Հրաձգության հանրապետական մարզադպրոց» ՊՈԱԿ	24
76	Երևան	«Գեղագիտության ազգային կենտրոն» ՊՓԲԸ	24
77	Երևան	«Խաղային մարզաձևերի օլիմպական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ	24
78	Երևան	«Գեղարվեստ. դաստիարակ. և մշակույթի մանկապ. կենտրոն» ՊՈԱԿ	24
79	Երևան	«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ	24
80	Երևան	'Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջ' ՊՈԱԿ	24
81	Երևան	«Երևանի տարածաշրջանային N 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
82	Երևան	«Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ	25
83	Երևան	«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ	24
84	Երևան	«Երևանի թեթև արդյուն. պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
85	Երևան	«Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ	25
86	Երևան	Երևանի պետ. հումանիտար տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ	24
87	Երևան	«Երեանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ	25
88	Երևան	«Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաշժտական քոլեջ» ՊՈԱԿ	24
89	Երևան	«Երևանի Ա. Բաբաջանյանի անվ. պետ երաշժտա-մանկ քոլեջ» ՊՈԱԿ	24
90	Երևան	«Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետ. քոլեջ» ՊՈԱԿ	24
91	Երևան	«Երևանի էստրադային և ջազային արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
92	Երևան	«Երևանի մշակույթի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
93	Երևան	«Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ	25
94	Երևան	«Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ	25
95	Երևան	«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ	24
96	Երևան	«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	24

97	Երևան	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ	24
98	Երևան	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	24
99	Երևան	«Եր. «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ	24
100	Երևան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ	24
101	Երևան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	24
102	Երևան	«Հայաստանում եվրոպական քոլեջ» հիմնադրամ	24
103	Երևան	Հայաստանում ֆրանսիական քոլեջ հիմնադրամ	0
104	Երևան	Երևանի պարարվեստի պետական քոլեջ ՊՈԱԿ	24
105	Երևան	Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ	25
106	Երևան	'Երևանի թիվ 1 արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
107	Երևան	'Երևանի թիվ 4 արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
108	Երևան	'Երևանի թիվ 6 արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
109	Երևան	'Երևանի թիվ 8 արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
110	Երևան	'Երևանի թիվ 9 արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
111	Երևան	'Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
112	Երևան	'Երևանի զարդարվեստի արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
113	Երևան	'Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր' ՊՈԱԿ	24
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 5-Երևան			**2705**
1	Լոռի	գ. Գուգարքի Հ.Շիրազի անվ. թիվ 1 ա/դ	24
2	Լոռի	ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոց	24
3	Լոռի	ք. Ալավերդու Ս.Նովայի անվ. թիվ 8 ա/դ	24
4	Լոռի	ք. Ալավերդու Ստ.Շահումյանի անվ. թիվ 5 ա/դ	24
5	Լոռի	ք. Սպիտակի Ս.Ավետիսյանի անվան ավագ դպրոց	24
6	Լոռի	ք. Ստեփանավանի Հ.Թումանյանի անվ. ա/դ	24
7	Լոռի	ք. Վանաձորի Ա.Գրիբոյեդովի անվ. թիվ 11 ա/դ	24
8	Լոռի	ք. Վանաձորի Մ.Խորենացու անվ. թիվ 17 ա/դ	24
9	Լոռի	ք. Վանաձորի Ս.Նովայի անվ. թիվ 10 ա/դ	24
10	Լոռի	ք. Վանաձորի Ս. Նուլղռանյանի անվ. թիվ 13 ա/դ	24
11	Լոռի	ք. Վանաձորի ՎՊՀ հենակակետային վարժարան	24
12	Լոռի	ք. Վանաձորի Տերյանի անվ. թիվ 5 ա/դ	24
13	Լոռի	ք. Տաշիրի ա/դ	24
14	Լոռի	ք. Վանաձորի Մաթեմատիկայի և բնագիտ.առարկաների խորացված ուսուցմամբ վարժ.	24
15	Լոռի	«Սպիտակի ՄՊ համալիր ՄԴ» ՊՈԱԿ	24
16	Լոռի	«Վանաձորի բռնցքամարտի ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
17	Լոռի	«Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
18	Լոռի	«Վանաձորի Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկ. քոլեջ» ՊՈԱԿ	24
19	Լոռի	«Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
20	Լոռի	«Սպիտակի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24

21	Լոռի	«Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	24
22	Լոռի	«Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	24
23	Լոռի	«Վանաձորի Թավրիզյանի պետական արվեստի քոլեջ» ՊՈԱԿ	24
24	Լոռի	«Վանաձորի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ	24
25	Լոռի	«Վանաձորի պետական համալսարան» ՊՈԱԿ	24
26	Լոռի	'Ալավերդու արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
27	Լոռի	'Վանաձորի թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան' ՊՈԱԿ	24
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 6-Լոռու մարզ			**648**
1	Կոտայք	Աբովյանի Արթուր Վանոյանի անվան թիվ 6 ա/դ	24
2	Կոտայք	գ. Գառնիի Ատոմի անվան հ. 2 ա/դ	24
3	Կոտայք	ք. Աբովյանի թիվ 4 ա/դ	24
4	Կոտայք	ք. Աբովյանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ա/դ	24
5	Կոտայք	ք. Աբովյանի կթհ.	25
6	Կոտայք	ք. Բյուրեղավանի Ս.Վարդանյանի անվ. ա/դ	24
7	Կոտայք	ք. Եղվարդի թիվ 1 ա/դ	25
8	Կոտայք	ք. Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ա/դ	24
9	Կոտայք	ք. Հրազդանի Հ.Օրբելու անվ. թիվ 13 ա/դ	24
10	Կոտայք	ք. Հրազդանի Վլ.Մայակովսկու անվ. թիվ 10 ա/դ	24
11	Կոտայք	ք. Նոր Հաճնի թիվ 2 ա/դ	24
12	Կոտայք	ք. Չարենցավանի Մ.Մաշտոցի անվ. թիվ 1 ա/դ	24
13	Կոտայք	«Հրազդանի մականախաղի և շախմատի օլիմպիակ. ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
14	Կոտայք	«Լ. Հարությունյանի անվան Ծաղկաձորի լեռնադահուկային ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
15	Կոտայք	«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
16	Կոտայք	«Աբովյանի էներգետիկական պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
17	Կոտայք	«Աբովյանի պետական բազմագործառութային քոլեջ» ՊՈԱԿ	25
18	Կոտայք	«Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
19	Կոտայք	«Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	24
20	Կոտայք	'Բյուրեղավանի արհեստագործական պետական ուսումնարան' ՊՈԱԿ	24
21	Կոտայք	'Նաիրիի արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
22	Կոտայք	'Հրազդանի արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
23	Կոտայք	'Աբովյանի կրթահամալիր' ՊՈԱԿ	24
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 7-Կոտայքի մարզ			**555**
1	Շիրակ	գ. Ախուրյանի Ն.Աղբալյանի անվ. ա/դ	24
2	Շիրակ	Վ. Թեքեյանի անվ. Գյումրու թիվ 2 ավագ դպրոց	24
3	Շիրակ	ք. Արթիկի թիվ 3 ա/դ	24
4	Շիրակ	ք. Գյումրու ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի ավագ դպրոց	24
5	Շիրակ	ք. Գյումրու «Գյումրու տնտեսագիտական վարժարան»	25
6	Շիրակ	ք. Գյումրու «Ֆոտոն» վարժ.	24

7	Շիրակ	ք. Գյումրու Ակադեմիական վարժարան	25
8	Շիրակ	ք. Գյումրու թիվ 1 ա/դ	24
9	Շիրակ	ք. Գյումրու թիվ 26 ա/դ	24
10	Շիրակ	ք. Գյումրու թիվ 37 ա/դ	24
11	Շիրակ	ք. Գյումրու թիվ 45 մ/դ	24
12	Շիրակ	ք. Գյումրու Շիրակի Մ.Նալբանդյանի անվ. պետ.համալսարան հիմնադրամի ա/դ	24
13	Շիրակ	«Գյումրու մանկապատանեկան համալիր ՄԴ» ՊՈԱԿ	25
14	Շիրակ	«Գյումրու Լ. Մնացականյանի անվան ձմեռային մարզաձևերի ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
15	Շիրակ	«Գյումրու սուսերամարտի ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
16	Շիրակ	«Գյումրու ծանրամարտի ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
17	Շիրակ	«Գյումրու աթլետիկայի օլիմպիական ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
18	Շիրակ	«Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն ՊՈԱԿ	24
19	Շիրակի	«Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
20	Շիրակ	«Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ	24
21	Շիրակ	«Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
22	Շիրակ	«Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետ. երաժշտ. քոլեջ» ՊՈԱԿ	24
23	Շիրակ	«Գյումրու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ	24
24	Շիրակի	«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	24
25	Շիրակ	Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ	24
26	Շիրակ	'Գյումրու թիվ 1 արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
27	Շիրակ	'Գյումրու թիվ 3 արհեստագործական պետական ուսումնարան' ՊՈԱԿ	24
28	Շիրակ	'Գյումրու թիվ 4 արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
29	Շիրակ	'Մարալիկի արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
30	Շիրակ	'Ամասիայի արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 8-Շիրակի մարզ			**723**
1	Սյունիք	ք. Գորիսի Ա.Բակունցի անվ. թիվ 1 ա/դ	25
2	Սյունիք	ք. Գորիսի թիվ 4 ա/դ	24
3	Սյունիք	ք. Կապանի թիվ 2 ա/դ	24
4	Սյունիք	ք. Կապանի թիվ 9 ա/դ	24
5	Սյունիք	ք. Սիսիանի ա/դ	24
6	Սյունիք	ք. Կապանի թիվ 3 հտ/կթհ	24
7	Սյունիք	«Քաջարանի համալիր ՄՊՄԴ» ՊՈԱԿ	24
8	Սյունիք	«Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
9	Սյունիք	«Սիսիանի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
10	Սյունիք	«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
11	Սյունիք	«Մեղրու պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
12	Սյունիք	«Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	24
13	Սյունիք	«Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24

14	Սյունիք	«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ	24
15	Սյունիք	'Քաջարանի արհեստագործական պետ ուսումնարան' ՊՈԱԿ	24
16	Սյունիք	'Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր' ՊՈԱԿ	24
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 9-Սյունիքի մարզ			**385**
1	Վայոց Ձոր	ք. Եղեգնաձորի թիվ 3 ա/դ	24
2	Վայոց Ձոր	ք. Ջերմուկի կրթահամալիր	24
3	Վայոց Ձոր	ք. Վայքի ավագ դպրոց	24
4	Վայոց Ձոր	«Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 10-Վայոց ձորի մարզ			**96**
1	Տավուշ	Դիլիջանի ավագ դպրոց	24
2	Տավուշ	ք. Բերդի թիվ 2 ա/դ	24
3	Տավուշ	ք. Իջևանի թիվ 2 ա/դ	24
4	Տավուշ	ք. Նոյեմբերյանի թիվ 1 ա/դ	24
5	Տավուշ	«Մոնթե Մելքոնյանի» անվ. ռազմամարզական վարժարան	24
6	Տավուշ	«Դիլիջանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
7	Տավուշ	«Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
8	Տավուշ	«Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
9	Տավուշ	«Բերդի պետական բազմագործառութային քոլեջ» ՊՈԱԿ	24
10	Տավուշ	«Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
11	Տավուշ	«Դիլիջանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ	24
12	Տավուշ	«Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ	24
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 11- Տավուշի մարզ			**288**
Ընդհանուրը			**6,480**

ԳՆՈՐԴ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011035624
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

Վ. Գասպարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Ջի-Էն-Ջի ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Սարյան 36շ, բն 12
Հեռ.՝ +374 444-444-36
Էլ.փոստ՝ info.gng.armenia@gmail.com
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570068263150200
ՀՎՀՀ 02831555

Տնօրեն՝

Ն. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2

«08» 12 2020 թ. կնքված

«ՀՀԿԳՄՆՀՄԱՊՁԲ-20/5» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում.		
			նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	**33621641/5**	**հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ**	19375200	19375200	**19375200**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011035624
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

Վ. Գասպարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Ջի-Էն-Ջի ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Սարյան 36շ, բն 12
Հեռ.՝ +374 444-444-36
Էլ.փոստ՝ info.gng.armenia@gmail.com
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570068263150200
ՀՎՀՀ 02831555

Տնօրեն՝

Ն. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ՄԵԴՈՒԹԱԳԻՐ N 000199 [165692817]
PAYMENT ORDER RECEIPT

Ամերիաբանկ ՓԲԸ Գլխամասային գրասենյակ
Ameriabank CJSC Head Office

ՊԿ\ID 227
Ամսաթիվ\Date 08/12/20 12:59

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount
1570068263150100	900008000698	AMD 19,375,200.00

Վճարող\Remitter
«ՋԻ-ԷՆ-ՋԻ» ՍՊԸ
G-N-G LLC

Վճարողի բանկ\Remitter's Bank
Ամերիաբանկ
AMERIABANK CJSC

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9902831555

Շահառու\Beneficiary
Գնումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձեւով, ՀՀՖիանսների նախարարություն

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Գանձապետական բաժանմունք
Treasure division

08 DEC 2020

Գումարը բառերով\Amount in Words
Տասնինը միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր դրամ

Նպատակ\Details
որակավորման ապահովում կանխիկ փողի ձևով պայմանագիր ՀՀԿԳՄՄՆՀՄԱՊՁԲ -20/5

	Հաշիվ\Account	Գանձման գումար\Commission
ԳանձումII\CommissionII	1570068263150100	AMD 500.00

Գանձման գումարը բառերով\Commission in Words
Հինգ հարյուր դրամ

Կատարող\Maker Սոնա Ավետիսյան

Կ.Տ.
ST.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ՄԵԴՈՒԹԱԳԻՐ N 000200 [2089728781]
PAYMENT ORDER RECEIPT

Ամերիաբանկ ՓԲԸ Գլխամասային գրասենյակ
Ameriabank CJSC Head Office

ՊԿ\ID 227
Ամսաթիվ\Date 08/12/20 13:00

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount
1570068263150100	900008000664	AMD 1,937,520.00

Վճարող\Remitter
«ՋԻ-ԷՆ-ՋԻ» ՍՊԸ
G-N-G LLC

Վճարողի բանկ\Remitter's Bank
Ամերիաբանկ
AMERIABANK CJSC

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9902831555

Շահառու\Beneficiary
Հայտի և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով կամ կանխիկ փողի ձևով

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Գանձապետական բաժանմունք
Treasure division

Գումարը բառերով\Amount in Words
Մեկ միլիոն ինը հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր քսան դրամ

Նպատակ\Details
պայմանագրի ապահովում կանխիկ փողի ձևով պայմանագիր ՀՀԿԳՄՄՆՀՄԱՊՁԲ -20/5

08 DEC 2020

	Հաշիվ\Account	Գանձման գումար\Commission
ԳանձումII\CommissionII	1570068263150100	AMD 500.00

Գանձման գումարը բառերով\Commission in Words
Հինգ հարյուր դրամ

Կատարող\Maker Սոնա Ավետիսյան

Կ.Տ.
ST.